Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱԼԹՈՒՆՅԱՆ ԷԴԻՏԱ ՌՈԲԵՐՏԻ

ՏԱՐԱԾԱԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ

Ժ. 02. 01 «Հայոց լեզու» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2026

Ատենախոսության թեման հաստատվել է Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ **Արմեն Յուրիկի Սարգսյան**
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ **Գայանե Գերասիմի Գևորգյան**
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Լուսինե Գեորգիի Մարգարյան
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2026թ. սեպտեմբերի 11-ին՝ ժամը 15:00-ին, Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲԿԳԿ-ի՝ Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0015, Երևան, Գրիգոր Լուսավորչի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026թ. օգոստոսի 7-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ **Ն. Մ. Սիմոնյան**
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է նախ՝ ժամանակի և տարածական հարաբերությունների լեզվական արտահայտության ուսումնասիրության կարևորությամբ: Իմաստային-թեմատիկ երկու խմբերն էլ լեզվում ներկայացված են բառային հարուստ կազմով, որի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բացահայտելու տվյալ լեզվի կառուցվածքային առանձնահատկություններն ու զարգացման օրինաչափությունները՝ տեսանելի դարձնելով նաև այդ լեզուն կրող ժողովրդի պատմությունն ու աշխարհին հարաբերվելու կերպը:

Երկրորդ՝ իմաստային այս խմբերի ուսումնասիրությունը բարբառային նյութի հիման վրա ձեռք է բերում առանձնահատուկ արժեք, քանի որ բարբառները հաճախ պահպանում են լեզվի ավելի վաղ փուլերին բնորոշ իրողություններ, որոնց վերհանումը կարող է նպաստել հայերենի բարբառների համակարգի առավել ամբողջական նկարագրությանը:

Երրորդ՝ տարածաժամանակային հարաբերություններ արտահայտող բառամիավորները նաև արտացոլում են ժողովրդի ավանդական կենսակերպը, կենցաղն ու բնական միջավայրի հետ կապված պատկերացումները, և այդ առումով դրանք արժեքավոր նյութ են մշակութաբանական ու ազգագրական ուսումնասիրությունների համար ևս:

Եվ վերջապես՝ ստեղծված պատմական պայմաններում բարբառի պահպանության հարցը դարձել է հրատապ: Արցախի հայաթափման հետևանքով այն կտրվել է իր բնական միջավայրից, իսկ դա հանգեցնելու է բարբառի կենսունակության նվազման: «Այսօր չկա որևէ բնակավայր, որը բնակեցված լինի միայն արցախցիներով, ինչը բարբառի պահպանման հիմնական երաշխիքն է: Ղարաբաղի բարբառը լեզվական նոր միջավայրում աստիճանաբար ավելի շատ կենթարկվի գրական ու խոսակցական հայերենի ազդեցությանը, ինչը խոսում է այն մասին, որ հայերենի մյուս բարբառների նման արցախահայերի հաղորդակցման հիմնական միջոցը զարգացման հեռանկարներ չունի և դատապարտված է վերացման»[1]: Ղարաբաղի բարբառի պահպանումն այսօր լուրջ մարտահրավեր է. դա էլ հրատապ ու արդիական է դարձնում նրա ուսումնասիրումը:

Ուսումնասիրության նյութը: Ուսումնասիրության նյութը Ղարաբաղի բարբառի ժամանակ և տարածական հարաբերություններ արտահայտող բառամիավորներն են, որոնց քննությամբ բացահայտվում են բարբառի բառապաշարի և ժողովրդական լեզվամտածողության յուրահատկությունները:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները: Սույն աշխատանքի նպատակը Ղարաբաղի բարբառի տարածաժամանակային հարաբերություններ արտահայտող բառամիավորների համակողմանի ուսումնասիրությունն է՝ դրանց ծագումնաբանության,

---

[1] Ա. Սարգսյան, Շ. Մինասյան, Ղարաբաղի բարբառ. արդի վիճակը և պահպանման հեռանկարները, Հայ բանասիրութեան հեռանկարներ: Ուսումնասիրութեան եւ ուսուցման արդի խնդիրներ, Երեւան-Լոս Անջելէս, ԱՄՆ Արեւմտեան թեմի Առաջնորդարան, 2025, էջ 67-68:

բառակազմական և իմաստային առանձնահատկությունների, գործառական դրսևորումների բացահայտմամբ, որը կարևոր է թե՛ լեզվաբանական, թե՛ պատմաճանաչողական տեսանկյունից: Այդ բառամիավորների քննությունը կարևորվում է նաև նրանով, որ նպաստում է պատմական պայմանների ճանաչողության ընդլայնմանը:

Նշված նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

1. առանձնացնել և համակարգել Ղարաբաղի բարբառում ժամանակ և տարածական հարաբերություններ արտահայտող բառամիավորները,
2. պարզաբանել դրանց ծագումնաբանական հիմքերը և բառակազմական յուրահատկությունները,
3. բացահայտել դրանց իմաստաբանական և գործառական առանձնահատկությունները,
4. դասակարգել դրանք ըստ իմաստային խմբերի և գործառական դրսևորումների,
5. վերլուծել տարածական ու ժամանակային իմաստների փոխհարաբերությունները քննվող բառամիավորների մեջ,
6. ցույց տալ դրանց կապը ժողովրդական լեզվամտածողության և կենցաղակարգի կառուցման մշակույթի հետ:

Ուսումնասիրության մեթոդաբանությունը: Աշխատանքում կիրառվել են լեզվաբանական հետազոտության մի շարք մեթոդներ՝ նկարագրական, համեմատական, վերլուծական:

Աշխատանքի առաջին գլխում նյութի համակարգված ու կառուցվածքային վերլուծություն կատարելու նպատակով կիրառվել է նաև հետազոտության ինդուկտիվ մեթոդը՝ հնարավորություն տալով առանձին լեզվական միավորների քննությունից անցում կատարելու ընդհանուր իմաստաբանական օրինաչափությունների բացահայտման: Առանձնացված բառային միավորները խմբավորվել ու դասակարգվել են ըստ իմաստային սերտության, որի արդյունքում ձևավորվել են ենթախմբեր՝ ելնելով դրանցում ընդգրկված միավորների ընդհանուր իմաստային հատկանիշներից ու կապերից: Այս մոտեցումը թույլ է տվել առաջարկելու տարածական հարաբերություն արտահայտող իմաստային-թեմատիկ խմբի բառապաշարի նոր դասակարգում:

Աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը: Ուսումնասիրության տեսական արժեքն ու նշանակությունն այն է, որ կատարված քննությունը նպաստում է բարբառի բառապաշարի իմաստային կազմակերպվածության ուսումնասիրության ընդլայնմանը, տարածաժամանակային հարաբերությունների արտահայտման բարբառային հնարավորությունների ճշգրտմանը, ինչպես նաև այդ հարաբերությունների լեզվական արտահայտության վերաբերյալ գիտական պատկերացումների խորացմանը:

Աշխատանքի գործնական նշանակությունն այն է, որ հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել հայ բարբառագիտության, բառապաշարի պատմության և լեզվամշակութային ուսումնասիրությունների բնագավառներում, ինչպես նաև համապատասխան դասընթացների և ուսումնական նյութերի մշակման համար:

Ուսումնասիրության գիտական նորույթը: Սույն աշխատանքի գիտական նորույթն այն է, որ առաջին անգամ համակարգված կերպով ուսումնասիրվում են Ղարաբաղի բարբառի տարածական ու ժամանակային հարաբերություններ արտահայտող բառամիավորները՝ դրանց ծագումնաբանական, իմաստաբանական, բառակազմական և գործառական առանձնահատկությունների վերհանմամբ: Ուսումնասիրության ընթացքում բացահայտվել են տարածական ու ժամանակային հարաբերությունների արտահայտության հնարավորություններն ու յուրահատկությունները բարբառում, գրական հայերենի համապատասխան միավորների հետ ունեցած փոխհարաբերությունները, ստուգաբանական վերլուծությամբ պարզաբանվել է դրանց պատմական զարգացումը, ինչպես նաև տրվել է կապը ժողովրդի լեզվամտածողության ու կենցաղային մշակույթի հետ:

Հետազոտության աղբյուրագիտական հիմքը և նյութի ուսումնասիրվածությունը: Քննվող իմաստային-թեմատիկ խմբերի բառապաշարն ուսումնասիրելու համար հիմնական սկզբնաղբյուր է ծառայել Ա. Սարգսյանի «Ղարաբաղի բարբառի բառարանը»[2], նաև Հ. Աճառյանի «Հայերէն գաւառական բառարանը»[3], «Թուրքերէնի ազդեցութիւնը հայերէնի վրայ եւ թուրքերէնէ փոխառեալ բառերը Պոլսի հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի եւ Նոր-Նախիջեւանի բարբառներուն» բառարանը[4], Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հրատարակած «Հայոց լեզվի բարբառային բառարանը»[5] և բանավոր խոսքը:

Հայտնի են մի շարք հեղինակների՝ ժամանականիշ բառամիավորների և տարածական հարաբերությունների արտահայտության ուսումնասիրության շուրջ կատարած աշխատանքներ:

Լ. Հովհաննիսյանը գրաբարի բառապաշարի իմաստային խմբերը դիտարկելիս քննել է նաև գրաբար մատենագրության մեջ ավանդված ժամանականիշ բառերը[6]:

Ժամանականիշ բառամիավորների ուսումնասիրություն կատարել է Ջ. Բառնասյանը: Նրա «Ժամանականիշ բառերը հայերենի բարբառներում» աշխատանքը նվիրված է **ժամանակ** արտահայտող հասկացությունների բարբառային դրսևորումների տարածական, իմաստագործառական և ծագումնաբանական քննությանը[7]:

Տարածական հարաբերությունների լեզվական արտահայտության ուսումնասիրությանն են նվիրված Մ. Քումունցի «Հնդեվրոպական շերտի բառերը

---

[2] Ա. Սարգսյան, Ղարաբաղի բարբառի բառարան (երկրորդ լրամշակված հրատարակություն), Երևան, 2019:

[3] Հ. Աճառյան, Հայերէն գաւառական բառարան, հ. Թ., Թիֆլիս, 1913:

[4] Հ. Աճառյան, Թուրքերէնի ազդեցութիւնը հայերէնի վրայ եւ թուրքերէնէ փոխառեալ բառերը Պոլսի հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի եւ Նոր-Նախիջեւանի բարբառներուն, հ. Գ., Մոսկուա-Վաղարշապատ, 1902:

[5] Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ա-Է, Երևան, 2001-2012:

[6] Լ. Հովհաննիսյան, Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն, մաս 1, Երևան, 2008, էջ 73-97:

[7] Ջ. Բառնասյան, Ժամանականիշ բառերը հայերենի բարբառներում, Երևան, 2009:

Սյունիք-Արցախ բարբառային բառապաշարում»[8] և «Տարածական հարաբերություններ արտահայտող բարբառային մի քանի հնաբանությունների շուրջ»[9] հոդվածները: Առաջինում քննության են առնվում Սյունիք-Արցախի բարբառային բառապաշարում տարածական հարաբերություններ՝ տեղ, ձև, չափ արտահայտող հնդեվրոպական ծագման մի քանի բառեր, երկրորդում ստուգաբանական և համեմատական վերլուծության են ենթարկվում նույն իմաստային խմբի մի շարք բառամիավորներ, փորձեր են արվում վերականգնելու հնագույն նախաձևերը:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկել և պաշտպանության է երաշխավորել Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժինը: Թեմայի հիմնադրույթներն արտացոլված են գիտական տարբեր հանդեսներում տպագրված յոթ հոդվածներում:

Աշխատանքի կառուցվածքն ու բովանդակությունը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, համառոտագրությունների և օգտագործված գրականության ցանկից: Իբրև հավելված կցվել է նաև քննվող իմաստային խմբերի բառապաշարն ընդգրկող բառարան:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, սահմանվում են հետազոտության նպատակն ու խնդիրները, ներկայացվում են ուսումնասիրության նյութը, մեթոդաբանությունը, տեսական և գործնական նշանակությունը, գիտական նորույթը, նյութի ուսումնասիրվածության աստիճանը և աղբյուրագիտական հիմքը:

ԳԼՈՒԽ 1. ՏԱՐԱԾԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ

1.1. «Տեղ» բառի իմաստային դաշտը և բառակազմական գործառույթը: Տարածական հարաբերությունների արտահայտության մեջ առանցքային իմաստաբանական միավոր է **տեղ** բառը: Այն կարելի է համարել տարածության նշման հիմնական լեզվական միավոր: Ղարաբաղի բարբառի խոսվածքներում **տըէղ/տըղ/տէղ** հնչատարբերակներն ունի: Բնիկ հայերեն բառ է՝ հնխ. sedlo- ձևից, որ առաջացել է sed- «նստիլ» արմատից՝ -lo- մասնիկով: Հնխ. sedlo- ձևը հայերենում դարձել է **ետղ** (սա հնագույն ձևն է), որից այնուհետև՝ **տեղ**[10]: Ղարաբաղի բարբառը պահել է նաև հնդեվրոպական բուն արմատի ճանաչելի ձևը: **Սըէտ/սէտ/սըտ** բառը, որ նշանակում է *որևէ բանի մասին տեղեկություն ստացած, տեղյակ, իրազեկ* (սըէտ ըմ-տեղյակ եմ, սըէտ չըմ-տեղյակ չեմ), ուղղակիորեն կրում է նախալեզվի արմատի հնչյունական կառուցվածքը: Այսինքն՝ հնդեվրոպական նախաձևը միևնույն լեզվական միջավայրում տվել է երկու տարբեր բառեր՝

[8] Մ. Քումունց, Հնդեվրոպական շերտի բառերը Սյունիք-Արցախ բարբառային բառապաշարում, Դպրատուն. գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2021/1, էջ 56-61:

[9] Մ. Քումունց, Տարածական հարաբերություններ արտահայտող բարբառային մի քանի հնաբանությունների շուրջ, Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր. հասարակական գիտություններ, Ստեփանակերտ, 2021/1, էջ 14-21:

[10] Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 4, էջ 392:

տըէղ/տըղ/տէղ և **սըէտ/սէտ/սըտ**՝ մի դեպքում պահպանելով տարածական նշանակությունը, մյուս դեպքում զարգացնելով ոչ նյութական, վերացական բովանդակություն: Բարբառում գործածվում է **սըէտ/սէտ/սըտ**-ին հոմանիշ **տըէղակ/տէղակ/տըղակ** (գրբ. տեղեակ) բառը ևս: Այն **տեղ**՝ *վայր* բառի իմաստային զարգացումն է, ըստ այդմ էլ՝ **սըէտ/սէտ/սըտ**-ը **տըէղ/տըղ/տէղ**-ի բառատարբերակը: Հետևաբար բարբառային **սըէտ/սէտ/սըտ**-ը ևս պետք է բխեցնել հնդեվրոպական նույն արմատից՝ sedlo-, որը հայերենում տվել է **ետղ**, ապա հնչյունների դրափոխությամբ դարձել է **տեղ**, որից և՝ **տեղյակ**՝ *իրազեկ, ծանոթ*[11]: Հնդեվրոպական այդ նույն արմատից ունենք **ն-ստ-ել** բառը՝ իր **տեղ** իմաստի ակնհայտ պահպանումով: Սակայն եթե **սըէտ/սէտ/սըտ**-ը հնդեվրոպական ժառանգություն է, **տըէղակ/տէղակ/տըղակ**-ը հավանաբար բարբառ մտել է ավելի ուշ՝ գրական հայերենի ազդեցությամբ:

Բարբառում, ինչպես և գրական հայերենում, **տեղ** բառը բազմիմաստ է. դա վկայում է նրա գործառական լայն ընդգրկման և իմաստային ընդլայնման մասին: Թեև բոլոր իմաստներն էլ առնչվում են տարածության նշման գաղափարին, իմաստային ընդլայնման հետևանքով ֆիզիկապես սահմանելի, ճանաչելի տարածք, տեսանելի, որոշելի տարածություն կամ վայր իմաստներին զուգահեռ հանդես են գալիս նաև ավելի վերացարկված, գործառական բնույթի նշանակություններ, երբ **տեղ** բառով արտահայտվում են տվյալ տարածության կամ տեղի գործառույթը, հասարակական կամ սոցիալական համատեքստում ունեցած կարգավիճակն ու հարաբերությունները:

Վերլուծությունից պարզ է դառնում, որ **տեղ** արմատը հայերենում առանձնահատուկ արտադրողականություն է դրսևորել՝ հնարավորություն տալով տարածական հիմքից բխեցնելու զանազան վերացական, ոչ նյութական նշանակություններ: **Տեղ**-ի իմաստային զարգացումները վկայում են լեզվամտածողության այն յուրահատկության մասին, ըստ որի՝ տարածությունը հանդես է գալիս որպես հիմնական կաղապար տարաբնույթ մարդկային փորձառությունները կառուցելու և դասակարգելու համար:

1.2. Տարածական սահմաններ և կառուցվածքային բաղադրիչներ արտահայտող բառամիավորները: Տարածական հարաբերություններ արտահայտող իմաստային-թեմատիկ խումբը ընդգրկում է նաև այն միավորները, որոնք տարածական սահմաններ կամ տեղի կառուցվածքային բաղադրիչներ են նշում: Այդ միավորներից է **անկյունը**՝ հնխ. ang արմատից՝ *-իւն* մասնիկով: «Հայերեն արմատական բառարանում» տրված են «անկիւն, քունջ, քօշա» և «մի առանձին տեղ, ծայր, խորշ» իմաստները: Արմատի բուն նշանակությունն է «ծռիլ, կորանալ»[12]: Բարբառում բառը **անգյուն/անգյուն** հնչատարբերակներն ունի՝ հետևյալ իմաստներով՝ 1. առարկայի կողային մակերես՝ կողք, կող, 2. որոշ ուղղությամբ ընկած բնակավայր, երկիր, գավառ, 3. կողմ, ծայր, 4. ընդհանրապես տեղ, վայր, կողմ:

---

[11] Լ. Հովհաննիսյան, Ղարաբաղի բարբառի բառապաշարի հնագույն շերտերը, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2000/1, էջ 120:

[12] Հ. Աճառյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 200:

Ինչպես տեսնում ենք, բառի հիմնական իմաստը (*առարկայի երկու ներքին կամ արտաքին կողմերի հանդիպման տեղը, երկու կողմերի միացումով կազմվող ծայրը*) բարբառը չի պահել, այլ անցում է կատարվել ավելի ընդհանրական տարածական իմաստների. **անգՒուն/անգՒուն**-ը տարածքի, օբյեկտի կողմնային, սահմանային կետ է, նաև սովորաբար այդպիսի դիրք զբաղեցնող եզրային վայրի, բնակավայրի, տեղանքի կամ կողմի անվանում:

Իմաստային նույն դաշտում են **թաՒրաՒփ/թաՒրափ/թարաՒփ**, **ղօլ**, **յան** բառերը, որոնք նույն տարածական հարաբերությունն են արտահայտում՝ ունենալով **անգՒուն/անգՒուն** բառի իմաստային բազմաշերտությունը (նրբերանգային տարբերություններով): **Անկյուն** բառի հիմնական իմաստը բարբառում արտահայտվում է փոխառյալ միավորներով՝ **բուրջ/բօրջ, պուճախ/պօճախ, քՒունջ**: Այս միավորներից յուրաքանչյուրն ունի տարբերակիչ նրբիմաստ: **ԱնգՒուն/անգՒուն**-ը սովորաբար գործածվում է *տան, շինության և այլնի կողմ* ընդհանրական ու չեզոք իմաստով, **քՒունջ**-ի արտահայտած իմաստը մասնավոր է՝ *ծայր, եզր*: **Պուճախ/պօճախ**-ը հոմանիշային սերտ աղերս ունի **քՒունջ** և **անգՒուն/անգՒուն** բառերի հետ և միավորում է նրանց իմաստային եզրերը: Ունի նաև ավելի մասնավորված նրբիմաստ՝ *ինչ-որ մի անկյուն*: **Բուրջ**-ը ավելի անորոշ ու նեղ իմաստ ունի՝ *մի կողմ, մի տեղ*[13]:

Ծայր, սահման, եզր իմաստներն ունեն **դաՒրաՒ**, **ղըրաղ/ղըրաՒղ, ճօնդ, ճՒօթ/ճՒօթ զէի, սը^էռ/սէռ/սըռ, ծըլպան**, **փէշկ/փէշ,** փոխաբերաբար՝ **կըրօյնը/կըրույնը** բառամիավորները:

1.3. Տարածական ուղղություն և շարժում արտահայտող բառամիավորները: Ուղղություն ու շարժում արտահայտող բառամիավորները լրացնում են տարածական հարաբերությունների ընդհանուր համակարգը՝ ընդգծելով դրա դինամիկ ու ընթացքային բնույթը և ցույց տալով, որ տարածությունը լեզվական գիտակցության մեջ ընկալվում է ոչ միայն որպես հաստատուն կառուցվածք, այլև շարժման, տեղաշարժի, ուղղվածության միջավայր: Ուղղության արտահայտման հիմնական միավորը **դեպի**-ն է՝ **բիդի/բըդի/ բէդի/բըդաՒ/դիբի/դըբաՒ** հնչատարբերակներով: Արմատը **դէպ**-ն է: Գ. Ջահուկյանի կարծիքով այն իրանական փոխառություն է, սակայն բուն աղբյուրը հաստատված չէ: Հավանական է ծագումը հնդեվրոպական *dheya- «տեսնել, նայել» արմատից[14]: Գրական հայերենի **դեպի առաջ, դեպի ետ/հետ** կազմություններին բարբառում համապատասխանում են **դըբառաչ/դիբառաչ** և **դըբէտ/դիբէտ/դըբը^էտ/դիբը^էտ** համադրական ձևերը, որոնցում **դեպի**-ի ցույց տված շարժման ուղղությունը կոնկրետացվում է հաջորդող բաղադրիչով: Հետաքրքրական են *ի* նախդրով կազմությունները՝ **ի յը^էր, ի վէր:** Այս կապակցություններում *ի* նախդիրը հանդես չի գալիս

[13] Լ. Մարգարյան, Արցախի բանահյուսության լեզուն, Ստեփանակերտ, 2011, էջ 39-40:
[14] Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 196:

որպես ուղղության ինքնուրույն նշիչ, այլ ընդգծում է շարժման ելակետն ու ուղղվածությունը, իսկ **յըէր** և **վէր** բաղադրիչները կրում են ուղղության հիմնական իմաստաբանական գործառույթը: Նույն կառուցվածքային ու իմաստաբանական օրինաչափությունն է դրսևորվում բարբառային **նըյըէր/նիյըէր/նըյէր/նիյէր** և **նըվէր/նիվէր/նըվըէր/նիվըէր** ձևերում, որոնք արտահայտում են համապատասխանաբար *դեպի վեր* և *դեպի վար* ուղղված շարժում: **Վեր** և **վար** բաղադրիչներն առկա են **կըլխըյըէր/կըխըյըէր** (գլխիվեր) և **կըլխըվէր/կըխըվեր** (գլխիվայր) ձևերում, որոնք բարբառում գործածվում են համապատասխանաբար *դեպի վեր, դեպի բարձր* և *դեպի ցած, դեպի ներքև* նշանակություններով՝ արտահայտելով շարժման ուղղվածություն: Քննվող իմաստային դաշտում են **տիյըէր/տըյըէր** և **տիվէր /տըվէր/տուվէր** ձևերը, որոնք կառուցվածքային առումով երկբաղադրիչ միավորներ են՝ *տի* (դեպի)+*յըէր* (վեր, վերև) և *տի* (դեպի)+*վէր* (վար, վայր): Այս ձևերում երկրորդ բաղադրիչները՝ **յըէր** և **վէր**, ապահովում են ուղղության տարբերակումը, իսկ առաջին բաղադրիչը մասնակցում է շարժման ուղղվածության արտահայտմանը:

1.4. Տարածական կողմնորոշում արտահայտող բառամիավորները: Տարածական հարաբերությունների կառուցման մեջ էական դեր են խաղում նաև այնպիսի միավորներ, որոնք անմիջականորեն ծառայում են տարածական կողմնորոշում ապահովելուն: Այս աշխատանքի շրջանակում այդ միավորները պայմանականորեն անվանել ենք կողմնորոշիչ միավորներ: Լեզվում այդ գործառույթն իրականացվում է տարբեր բառաձևերով, սակայն դրանց մեջ առանձնանում են այնպիսիները, որոնք անմիջականորեն ծառայում են որպես կողմնորոշման հենակետեր, և որոնց միջոցով լեզվում կազմակերպվում է տարածքի ընկալումը: Դրանք են՝ **աջ, ձախ** և **հյուսիս, հարավ, արևելք, արևմուտք** բառերը, որոնք և՛ նկարագրում են առարկաների կամ երևույթների տեղադրությունը տարածության մեջ, և՛ հստակեցնում են դրանց փոխհարաբերությունը խոսողի կամ դիտողի դիրքի նկատմամբ:

Աջ և **ձախ** բառամիավորները բարբառում հանդես են գալիս ոչ միայն որպես կողմնորոշման ցուցիչներ, այլև որպես ավելի լայն իմաստային միավորներ, որոնք իրենց ուրույն դերն ունեն լեզվական աշխարհընկալման ձևավորման մեջ: Պետք է հավելել նաև, որ դրանք ցույց են տալիս հարաբերական, իրավիճակային և ոչ բացարձակ կողմնորոշում՝ կախված տվյալ տարածության մեջ խոսողի զբաղեցրած դիրքից:

Համընդհանուր ճանաչում ունեցող աշխարհագրական ուղղությունների անվանումները՝ հյուսիս, հարավ, արևելք, արևմուտք, բարբառում չեն գործածվում: Կողմնորոշումը, ըստ հորիզոնի կողմերի, բարբառում իրականացվում է ժողովրդական լեզվամտածողության, կենսափորձի, լանդշաֆտային առանձնահատկությունների, բնական երևույթների հիման վրա: Այսպես, **ղղութարան/ուղութարան** (գրբ. աղօթարան) բառը բարբառում համանունային զույգով է հանդես գալիս՝ *աղոթք անելու շինություն, աղոթատուն, եկեղեցի* և *հորիզոնի արևելյան կողմը* նշանակություններով: **Ղղութարան/ուղութարան** բառի գործածությունը *հորիզոնի արևելյան կողմը* նշանակությամբ հետաքրքիր օրինակ է այն բանի, թե ինչպես է տարածական կողմնորոշումը ձևավորվում ժողովրդական ընկալումների, պատկերացումների հիման

վրա: Սկզբնական *աղոթքի տեղ, եկեղեցի* իմաստից զարգացել է կողմնորոշիչ իմաստ՝ *արևելք*: Սա կապված է քրիստոնեական ավանդույթի հետ, ըստ որի՝ քրիստոնյաները եկեղեցում աղոթում են դեմքով դեպի արևելք, եկեղեցիների խորանները նույնպես միշտ ուղղված են դեպի արևելք: Այս կայուն կապն էլ հենց հանգեցրել է իմաստային զարգացման՝ ցույց տալով, թե ինչպես են կրոնական ավանդույթները ազդել տարածական կողմնորոշման լեզվական արտահայտության վրա: **Հյուսիսն** ու **հարավը** նկարագրելու համար բարբառում կիրառվում են **գ'ունէ** և **ղուզէ** ածականները: Փոխառվել են արևելյան լեզուներից: **Գ'ունէ** (guney՝ հարավ) նշանակում է *արեգակի դիմաց գտնվող, արևահայաց, արևկող*, **ղուզէ** (kuzey՝ հյուսիս)՝ *ոչ արևկող, ոչ արևահայաց*: Հետաքրքիր է, որ բարբառում **հյուսիսն** ու **հարավը** ուղղակիորեն չեն անվանվում, այլ բնութագրվում է դրանց լուսավորվածության աստճանը. *արևոտ, արևահայաց* հատվածն նույնացվում է **հարավի** հետ, իսկ *ստվերոտ, ոչ արևկող* հատվածը՝ **հյուսիսի** հետ: Այսպիսով, յուրահատուկ իմաստային կապի շնորհիվ հորիզոնի կողմերը ներկայացվում են ոչ ուղիղ անվանմամբ, այլ տարածության որակական բնութագրումների հիման վրա՝ հիմնված իրական բնական պայմանների, բնական փորձի վրա:

1.5. Տարածական հարաբերությունների դերանվանական (ցուցական, հարցական) արտահայտիչները: Տեղի, տարածության մասին հարցումը իրականացվում է **ո՞ւր** և **որտե՞ղ** հարցական բառերի միջոցով: **Ուր**-ը բնիկ հայերեն բառ է՝ կազմված *-ր* մասնիկով **ու* անորոշ դերանունից, որ չի պահել իր անկախ գոյությունը և գալիս է հնխ. k^2u անորոշիչ[15]: Ըստ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանի՝ արմատն է *ո՞, ո՞յր, յո՞ր*[16]: Ղարաբաղի բարբառում այն հնչում է **հօր/հուր** ձևով և գործածվում է կապակցությամբ. **հօր ա՞***-ո՞ւր է, որտե՞ղ է*: **Ուր** նշանակությունն ունի նաև **թօրնը/թօռնը/թօրը/թօռը** բառը, որ արտահայտում է հարցում գործողության ուղղվածության, շարժման նպատակակետի մասին՝ *թօռն ը՞ս ք'ինամ*: Ծագում է *ընդ ու՞ր* ձևից[17]: Շատ է գործածվում **թօրնը յէշ'ում ըս** կապակցության մեջ, որ *ամեն տեղ, ամենուր* իմաստներն ունի: **Որտեղ** բառը բարբառում **ըշտը^էղ/ըշտէղ/հըշտը^էղ/հիշտէղ/վըրդէղ/վըրդը^էղ** հնչատարբերակներն ունի: Արտահայտում է հարցում գործողության, առարկայի և այլնի տեղի մասին՝ *ի՞նչ տեղ, ո՞ւր*: Որպես հարաբերական՝ ցույց է տալիս հարաբերյալի տեղը՝ *որ տեղում որ, տվյալ տեղում որ*: Ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ բարբառում **ո՞ւր** և **որտե՞ղ** հարցական բառերի միջև գործառութային հստակ տարբերակվածություն չկա, իմաստային սահմանագիծը մեղմացած է՝ դարձնելով դրանց գործածությունը առավել ճկուն, հաճախ միմյանց փոխարինող: Տարածական հարաբերություն արտահայտող ցուցական բառերն են **այստեղ, այդտեղ, այնտեղ՝ ըստը^էղ/ըստէղ/ըստը^էղ/ըստը^էղ/ըստը^էղ/տը^էղ/տէղ/տը^էղ, ընդը^էղ/ընդէղ/ընդը^էղ/դը^էղ/դէղ/դը^էղ՝** բարբառին հատուկ հնչյունական փոփոխություններով: Ցուցական այս բառերը

---

[15] Հ. Աճառյան, նշվ. աշխ., հ. 3, էջ 613:

[16] Գ. Աւետիքեան, Խ. Սիւրմէլեան, Մ. Ալգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, Վենետիկ, 1837, էջ 557:

[17] Ալ. Մարգարյան, Գորիսի բարբառը, Երևան, 1975, էջ 164:

բարբառում ճկուն ու բազմագործառույթ միավորներ են և ծառայում են ինչպես տարածական, այնպես էլ իրավիճակային բնույթի հարաբերությունների նշմանը:

ԳԼՈՒԽ 2. ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ

2.1. Ժամանակային հարաբերություններ արտահայտող բառամիավորները

2.1.1. **Ժամ** և **ժամանակ** հասկացությունների արտահայտությունը

Ժամանակ բառային միավորը վկայված է հին հայերենի գրավոր հուշարձաններում: Հ. Աճառյանը այն ներկայացնում է որպես պահլավական փոխառություն՝ žamān, žamānak, իսկ **ժամ** բառը համարում է հայկական կառուցվածք. «**ժաման** բառի մէջ *ան* մասնիկ է կարծուել, որով և յարմարեցրած է արմատական **ժամ** ձևը»[18]: Գ. Ջահուկյանը **ժամանակ**-ը համարում է փոխառություն իրանական աղբյուրից[19], իսկ «Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան» աշխատության՝ հայերենի իրանական փոխառությունների հիմնական ածանցավոր կազմությունները ներկայացնող բաժնում տրամաբանական է համարում *ժամ+անակ* ածանցումը[20], **ժամ** բառն էլ առանձնացված է համարում իրանական žamān ձևից՝ *-ān* և հայ. *-ան* ածանցների բաղարկմամբ[21]: Լ. Հովհաննիսյանի կարծիքով՝ **ժամ**–ը կարող է միանգամայն տրամաբանական եղանակով առաջացած հայերեն բառ լինել՝ *q* նախդիրով և *ամ* բնիկ հայերեն արմատով[22]: Այս տրամաբանությամբ առաջնորդվելով՝ Ջ. Բառնասյանը **ժամանակ** բառը համարում է *ժամ* հայերեն արմատի և *-անակ* իրանական փոխառյալ վերջածանցի բաղադրությամբ է առաջացած[23]: Ղարաբաղի բարբառում **ժամ** բառային միավորը գործածության ավելի մեծ հաճախականություն ունի, քան **ժամանակը:** Այն ներկայացնում է իմաստային հետևյալ դրսևորումները՝ 1. ժամանակի չափման միավոր, որ հավասար է վաթսուն րոպեի, ժամ, 2. ժամանակ, պահ, 3. մեկ ժամ տևողությամբ ժամանակի չափ: Հատկանշական է, որ **ժամ** բառը բարբառում համանունային զույգ է. բառիմաստի ընդլայնմամբ այն ուրիշ՝ *եկեղեցի, ժամերգություն* նշանակությունն է ձեռք բերել՝ բազմիմաստության տրոհմամբ հիմք տալով համարմատ համանունների գոյության: **Ժամանակ** իմաստով բարբառում գործածվում է հոմանիշ եզրերի մի ամբողջ խումբ՝ **ժուկ, գ'ահ/գ'ահ, վախտ, չախ, վանդ, մըջալ/մաջալ** և այլն: Ժամանակի կարճ հատված նշող հասկացությունները՝ **ռոպե**, **վայրկյան**, բարբառում արտահայտվում են համապատասխանաբար **ռօպէ** և **մինուտ** նույնանշային զույգով, իսկ **վայրկյանը**՝ և՛ նկարագրական եղանակով՝ **ըշկըճըպ(էլ)ումը** (կազմված է *աչք* և *ճպել* բաղադրիչներից և բառացիորեն նշանակում է *աչքը ճպելու ընթացքում*, այսինքն՝ *ակնթարթորեն, շատ կարճ ժամանակում*), և՛ նոր շրջանի փոխառությամբ՝ **սէկունդ** բառով:

---

[18] Հ. Աճառյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 222-223:
[19] Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 279-280:
[20] Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 569:
[21] Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, 2010, էջ 279:
[22] Լ. Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները, Երևան, 1990, էջ 94:
[23] Ջ. Բառնասյան, նշվ. աշխ., էջ 7:

2.1.2. Օրվա պահեր արտահայտող բառերը: Օրվա պահերը՝ **առավոտ**, **կեսօր**, **իրիկնապահ, գիշեր**, հայերենում բնիկ միավորներով են վկայվել՝ անվանելով օրվա տարբեր հատվածները և արտահայտելով դրանց փոխհարաբերություններն ու հաջորդականությունը: Ղարաբաղի բարբառում դրանք նույնպես վկայված են ու դրսևորվում են հոմանշային խմբերով:

Առավոտ բառը բարբառի տարբեր խոսվածքներում ունի **ուռթանա/ուռութանա/ըռութանա/ըռավէտ/ըռավօտ** հնչատարբերակները, գործածվում է *արևը ծագելու ժամանակը՝ առավոտ* և *առավոտ ժամանակ՝ առավոտյան* իմաստներով, ներկայանում է բազմաթիվ հոմանիշային տարբերակներով: Տարբերակային բազմազանությունը բացատրվում է այն հանգամանքով, որ «այդ օրապահն ընդգրկում է բավական երկար ժամանակահատված՝ գիշերավարտից մինչև կեսօր»[24], ուստի այն կոնկրետացնելու, հնարավորինս ճանաչելի դարձնելու միտումով օրվա այդ պահն անվանելիս մարդիկ ընտրել են բնորոշ որևէ հատկանիշ և դրել անվանման հիմքում, նայած թե ինչն է առավել կարևոր, բնութագրական համարվել այդ ժամանակահատվածի համար: Մի դեպքում այն կապվում է *արևի ծագելու*, մեկ այլ դեպքում՝ *լույսի բացվելու* կամ *օրվա սկզբի* հետ, և այս հատկանիշներից յուրաքանչյուրը դարձել է առանձին անվանման, հետևաբար նաև բառամիավորի հիմք՝ ձևավորելով բազմանդամ հոմանիշային շարք՝ **քըշէրավ/քիշէրավ, քըշըհանա/քըշըրհանա/քըշանա, քըշըրհանա-քըշէրավ, ըռութանա-քըշէրավ, լուսամօտ, լուսատէմ, լուսըթաթախ, դըբըլուս/դիբըլուս, ծաքին/ծաքին, ծըքուլին**, **ծըքպըտառէն/ծիքպըտառէն** կամ **ծաքը պըտըռէլին**, **ծաքին-ծըքպըտառէն, ծաքը ծաքին** և այլն:

Կեսօր բառը **քըսօր/քըսօր** հնչաձևերն ունի: Այն մեզ հայտնի *կես* և *օր* արմատների բաղադրությունն է: Բարբառում *կեսօր* իմաստով հաճախ գործածվում է **ճաշ** բառը: Ըստ Հ. Աճառյանի՝ այն իրանական փոխառություն է, որ արդեն իսկ փոխատու լեզվում, *կեսօրվա կերակուր, խնջույք, հացկերույթ* իմաստներից բացի, ունեցել է *ճաշելու ժամ* իմաստը[25]: Այս երևույթը նկատելի է նաև Ղարաբաղի բարբառում: Ինչպես գիտենք, **կեսօրը** համարվում է օրվա ամենատաք պահը, երբ արեգակը գտնվում է զենիթում և առավելագույն չափով է տաքացնում երկիրը: Այս երևույթի հիման վրա *կեսօր* իմաստը բարբառում երբեմն արտահայտվում է նաև *արև* բաղադրիչով կազմված և ժողովրդի պատկերավոր մտածողության արդյունք հանդիսացող հետևյալ կապակցություններով՝ **ըրէվէն գահումը** և **ըրէվէն տըրըքտըրքուտէլիս վախտը**, որոնք ունեն *կեսօրին, արևի կիզիչ պահին* նշանակությունները: Օրվա այս լուսավոր հատվածը արտահայտվում է նաև **ցիրըէկ/ցիրէկ՝ ցերեկ** ժամանականիշով:

Իրիկնապահը կամ **երեկոն** ունի **ուրուգուն(ն)/ըրուգուն(ն)** հնչատարբերակները: Նրանով են բաղադրվել **ըրգօնէ/ուրգօնէ/ուրուգունի, ըրուգունանալ/ուրուգունանալ,**

[24] Նույն տեղում, էջ 16:
[25] Հ. Աճառյան, նշվ. աշխ., հ. 3, էջ 185:

ըրուգ՝ունաչախ/ուրուգ՝ունաչախ, ըրուգ՝ունատէմ/ուրուգ՝ունատէմ, դըբըրուգ՝ուն/դիբիրուգ՝ուն/դուբուրուգ՝ուն/դուգ՝ուն բառամիավորները: Բարբառում գործածվում են 3 բաղադրիչից կազմված **դըբըրուգ՝ունաչախ** (դեպի+երեկոյի+չախ) և **դըբըրուգ՝ունատէմ** (դեպի+երեկոյի+դեմ) բարդությունները, որոնք ունեն իմաստային նույն նրբերանգները՝ *երեկոն ընկնելու ժամանակ, իրիկնադեմ, իրիկնամուտ*: Այս օրապահը նշելու համար բարբառի խոսվածքներում գործածվում են նաև **ըժըմաժէնք՝/ըժըմաժանք՝/ժիժիմաժինք՝/ժըմաժէնք՝/ժըմաժանք/ժիրժինք՝**, **իրըվանցուկ/ըրըվազուկ/իրըվազուկ/ըրըվազունք/իրըվազունք, մըթնաժուռ/մըթնաժօռ/մըթնաժուր/մըթնաժօր** և այլ բառեր:

Ժամանակային հաջորդականությամբ երեկոյի, իրիկնապահի շարունակությունը **գիշերն** է՝ **քըշէր/քիշէր** հնչաձևերով:

2.1.3. Օր, շաբաթ, ամիս, տարի, տարվա եղանակ հասկացությունների արտահայտությունը: Ժամանականիշ միավորները ոչ միայն ժամանակի վերացականությունը հաղթահարելու, անսկիզբ ու անվերջ ժամանակում կողմնորոշվելու միջոց են, այլև կենսակարգ ու վարք կարգավորող միավորներ: Ժամանակ արտահայտող այդպիսի բառերի շարքը համալրում են **օրը**, **շաբաթն** ու **շաբաթվա օրանունները**, **ամիսը**, **տարին** և **տարվա եղանակները**:

Օր բառը բնիկ հնդեվրոպական է՝ հնխ. āmōr ձևից, որ տվել է նախ *ամուր*, հետո՝ *աւմր*, *աւր*[26]: Բարբառում **օր** բաղադրիչով են կազմվել հետևյալ բառերը՝ **աւօր** «*այս օր*», **ալ՝ էր/ալ՝ էր** «*այլ օր*», **կ՝ալ՝ էր/ կ՝ալ՝ էր/կ՝ալ՝ էր/կ՝ալ՝ էր** «*գալ օր*», **չալ՝ էր/չալ՝ էր/ճալ(լ)էր** «*մինչ այլ օր կամ չէ այլօր*», **մալ՝ էր/մալ՝ էր** «*մի այլ օր*»: **Փալ՝ էր/փալ՝ էր**-ի *փալ* բաղադրիչի իսկությունը մնում է անբացատրելի: Ղարաբաղի բարբառում հանդիպում ենք նաև տվյալ օրվան նախորդող օրերի անվանումների՝ **մը՝ կսալ/մէկսալ օրը**՝ *այսօրվանից հաշված՝ հաջորդականության նախորդող պլանում տեղակայված երրորդ օրը*, **մը՝ կալ/մէկալ օրը**՝ *նույն շարքում՝ երկրորդ օրը*, **յըրկէ/յըրէգ՝ի/յէրէգ՝ի/ըրկէ** (գրբ. երէկ)՝ *տվյալ օրվա նախորդ օրը, երեկ*:

Շաբաթ բառը բարբառում **շէբաթ/շէբէթ/շաբաթ/շէփաթ/շաւփաթ/շաւպաթ** հնչատարբերակներն ունի և, ի տարբերություն գրական հայերենի, որտեղ համանունային զույգով է հանդես գալիս՝ ունենալով *յոթնօրյակ և շաբաթվա վեցերորդ օրը* իմաստները, բարբառում այն ունի միայն *յոթնօրյակ* իմաստը՝ *ժամանակի հաշվման միավոր՝ երկուշաբթի օրվանից մինչև կիրակի ներառյալ*:

Ամէս/ամը՝ էս/ամիս (գրբ. ամիս) բառը բարբառում *տարվա տասներկու մասերից յուրաքանչյուրը* և *երեսուն օրվա ժամանակամիջոց* իմաստներն ունի: Բնիկ հայերեն բառ է՝ հնխ. *mēns ձևից[27]: Այս արմատով գործածական են **ամսանը**, **ըմսավէրչ**, **ըմսըէկան/ըմսական**, **ըմսըկէս**, **ըմսըկըլ՝էխ** բառերը:

---

[26] Նույն տեղում, հ. 4, էջ 616:

[27] Նույն տեղում, հ. 1, էջ 158:

Տարի հասկացության հնդեվրոպական անվանումը **ամ**-ն է՝ հնխ. sama- ձևից. դա վկայում է բառի և հասկացության հին ակունքների մասին: **Տարի**-ն «Հայերեն արմատական բառարանում» ստուգաբանված չէ: Գ. Ջահուկյանը հավանական է համարում ծագումը աքքադական daritu(m) *տևողություն, հավիտենություն* բառից[28]: Ուրեմն **ամ**-ը հայերենում գործածության հին ակունքներ ունի, իսկ **տարի**-ն գործածվել է ավելի ուշ: Բարբառում բառը հանդես է գալիս **տարէ/տարի/տարը**ᵉ հնչատարբերակներով և ունի հետևյալ իմաստները՝ 1. տասներկու ամսվա տևողություն՝ տարի, 2. որոշ ժամանակաշրջան, ժամանակներ, 3. երկար ժամանակ, 4. որևէ բանով բնորոշվող տարեթիվ՝ ժամանակ՝ 5. մահվան տարելից: Լեզվաբանական տեսանկյունից հետաքրքրական է վերջին իմաստը, քանի որ ժամանակի չափը կապվում է հիշատակի ծեսի հետ, այսինքն՝ բառը ձեռք է բերել նաև մշակութային-ծիսական արժեք:

Բարբառում գործածական են տարվա չորս եղանակների անունները՝ **կարունք/կաՙրունք, ամըᵉռ(նը), աշունք, ծըմըᵉռ(նը)/ծըմէռ(նը)** հնչաձևերով: Սա վկայում է, որ բարբառակիրները հստակորեն տարբերակում ու տարանջատում են գարունը, ամառը, աշունը և ձմեռը: Հետաքրքրական է, որ տարվա եղանակների անունների հետ բարբառում կարող է գործածվել ցուցական *ս* հոդը, որն ունի *էս* (այս) դերանվան իմաստը և արտահայտում է ժամանակի մոտիկության գաղափար՝ **կարունքըս/կՙըրունքէս, ամըᵉռնըս/ըմըռնուս, աշունքըս/ըշունքէս, ծըմըᵉռնըս/ ծըմըռնուս:** Ընդ որում, եթե գրական հայերենին խորթ է ցուցական հոդի և ցուցական դերանվան գործածությունը միևնույն բառի հետ, ապա բարբառում հոդի և դերանվան համատեղ կիրառությունը սովորական է, ինչպես՝ *էս աշունքըս, էս ըմըռնուս, էս կՙըրունքէս:*

2.2. Ժամանակի ամրակայման ձևերի բառային իրացումը Ղարաբաղի բարբառում

2.2.1. Ժամանակի ամրակայման ձևերի բառային իրացումը՝ ըստ պատմական դեպքերի ու դեմքերի: Ժամանակը հաճախ ճանաչելի ու չափելի է դառնում ժողովրդի հիշողության մեջ անջնջելի հետք թողած նշանակալից իրադարձությունների, պատմական դեպքերի հետ կապելով[29]: Պատմական բոլոր կարևոր իրադարձությունները ժողովրդի լեզվում վկայվում են ժամանականիշ միավորներով, որոնք դառնում են թե՛ ժամանակը հաշվարկելու միջոց, թե՛ տվյալ ժամանակաշրջանի պատմական իրողությունները ճանաչելու պայման և թե՛ տվյալ ժամանակաշրջանը հասցեավորող միավորներ: Այդպիսի միավորներից են՝ **նիմէցին կըռըվէն/կըռըվավը, կաղթականի տարէ/տարի, փՈՒրփՈՒտու տարէ/տարի, Շուշին/Ղալան էրվէլան յըᵉտը, մինչըᵉվ շարժումը ընգընէլը, շարժումէն վախտը, շարժումա յըᵉտ, ապրէլին կըռվավը/կըռվէն** և այլն: Այս արտահայտությունները հասկանալի ժամանակահատված են մատնանշում՝ առանց լրացուցիչ պարզաբանումների և թվական հիշատակության: Ղարաբաղի բարբառում գործառում են նաև նշանավոր մարդկանց անունների հետ զուգադրվող ժամանականիշ ձևեր: Այսպես, *շատ հին, անհիշելի ժամանակները* նկատի

[28] Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 724:
[29] Ջ. Բառնասյան, նշվ. աշխ., էջ 74:

ունենալով՝ բարբառակիրները գործածում են **Նօյին թրվանց/դուրվանց, Նօյին թրվին/դուրվին, Նաբուն դուրվանց/թրվանց**, **Նաբուն դուրվին/թրվին, Լէնկ-Թէմուրէն վըխտանց/վախտէրքը, Նիկալայինդուրվանց/թրվանց, Նիկալային դուրվին/թրվին** արտահայտությունները: Պատերազմների, նշանավոր ճակատամարտերի, հայտնի մարդկանց անունների հետ կապվող դեպքերի, իրադարձությունների կատարման ժամանակը հիշողության մեջ ամրակայելու և դրանց հիշատակությամբ այլ իրադարձությունների և գործընթացների ժամանակը ճշգրտելու նպատակով կիրառվող ժամանականիշ բառերն ու բառակապակցությունները կարող են գործառել միայն մի որոշակի ժամանակահատվածում, իսկ հետագայում կարող են մոռացվել և դուրս գալ գործածությունից:

2.2.2. Ժամանակի ամրակայման ձևերի բառային իրացումը՝ ըստ առօրյա կենցաղակարգի: Ժամանակի հաշվարկման համար հիմք են ծառայել կենսական, առօրեական այնպիսի դեպքեր, իրադարձություններ ու երևույթներ, որոնք մեր նախնիներն ընկալում էին որպես կենցաղակարգ, սովորույթ: Ժամանակի ընթացքում ծիսական նշանակություն ստացած կենցաղակարգն ու սովորույթները վերածվեցին նաև ժամանականիշ միավորների՝ նշելով տվյալ ծեսի իրականացման հետ կապված կոնկրետ ժամանակ: Ամենօրյա առտնին գործերը գրեթե միշտ նույն ժամին կատարելով՝ մարդիկ կարողացել են ժամանակի մեջ կողմնորոշվել: Այսպես՝ օրվա երեք պահերին ճաշելու համար սեղան նստելու սովորությունը դարձել է այդ պահերն անվանող ժամանակային միավորիների ձևավորման հիմք: **Քըշընահաց** կամ **ըռութընահաց/ուռութունահաց/ուռթընահաց**, **քըսուրահաց/քըսուրահաց**, **ըրուգունահաց/ուրուգունահաց** կամ **քըշըրահաց** բառերը դիպուկ ձևով մատնանշում են *օրվա սկիզբը*, *օրվա կեսը* և *օրավարտը*: Այս բառերը, սակայն, ոչ թե կոնկրետ ժամանուններ են, այլ օրվա որոշակի ժամանակահատվածի հետ աղերսվող բառանվանումներ, ավելի կոնկրետ՝ պարբերաբար կրկնվող երևույթի անվանումը դարձել է նաև դրա կատարման ժամանակի անվանում: Երեկոյան ժամերին պարբերաբար կրկնվող կենցաղակարգի մաս է կազմում ճրագները վառելը: Այս պահը Ղարաբաղի բարբառում դրսևորվել է **ճըրըքլուսին** ձևով և դարձել է ժամանականշության ավանդական արտահայտություն: Հետաքրքրական է, որ բարբառում բառն իր բնիմաստով է պահպանվել՝ *ճրագալույցին՝ ճրագները վառելու ժամին*: Անասնապահությամբ զբաղվող տարածքներում նույնպես որոշակի ժամանակահատված մատնանշող ձևեր կան, օրինակ՝ **տըվըրվըննէն** բառամիավորը ավանդական ընկալմամբ բարաբառում *երեկո* իմաստն է արտահայտում, աքաղաղի առաջին կանչի պահը բառայնորեն դրսևորվել է **վըրցըկկանչին** ձևով՝ խորհրդանշելով գիշերավարտն ու լուսաբացը: Առօրյա կենցաղակարգին, հետևաբար նաև ժամանականշությանն են առնչվում թաղման ծեսերն ու դրանք անվանող բառամիավորները: Կրկնվելով միշտ նույն հաջորդականությամբ՝ մարդու մահից հետո կատարվելիք ծեսերն ու արարողությունները ժամանակի ամրակայման ավանդական ձև են դարձել ժողովրդի գիտակցության մեջ:

2.2.3. Ժամանակի ամրակայման ձևերի բառային իրացումը՝ ըստ ազգային և կրոնական տոների: Ժամանակը ճշգրտելու համար մարդկային գիտակցության մեջ կողմնորոշիչ դեր են կատարում ինչպես բնության մեջ պարբերաբար կրկնվող երևույթները, այնպես էլ բնության այդ երևույթների պաշտամունքին աղերսվող և ամեն տարվա նույն ժամանակահատվածում նշվող տոներն ու ծիսակատարությունները: Վաղնջական ժամանակներից սկսած՝ տարվա նույն ժամանակահատվածում պարբերաբար նշվող ազգային ու կրոնական տոները ժամանակաչափ են դարձել մարդկանց համար: Ազգային ու հոգևոր կյանքի իրադարձություններն ու փուլերը մտապահելը և այլ դեպքերի ու իրադարձությունների կատարման ժամանակը դրանց հետ զուգորդելու ճանապարհով հիշելը ժողովրդի լեզվագիտակցության մեջ ժամանակն ամրակայելու փորձված միջոցներից են: Ժամանակի ընթացքայնության մեջ կողմնորոշվելիս ուղենիշ հանդիսացող միջոցները այսօր էլ չեն կորցրել իրենց դերը բարբառախոս, հատկապես տարեց սերնդի ամենօրյա ու առօրյա խոսքում: Այսպես, **Զատիկը** ամենասիրված, ամենահիշարժան տոներից մեկն է, որ թեև շարժական է, նշվում է մարտի 22-ից հետո մինչև ապրիլի 26-ն ընկած ժամանակաշրջանում, այնուամենայնիվ ժողովրդի լեզվամտածողության մեջ այն ժամանակն ամրակայելու և մտապահելու փորձված միջոցներից է՝ բարբառային **զատէգ/զէտէգ** հնչատարբերակներով: Դա հաստատելի է օրինակով՝ *Վարդավառի թադերքը* ***զատկից*** *ըն ըսկսում:*

ԳԼՈՒԽ 3. ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԼԵԶՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Տարածությունն ու ժամանակը մարդու կողմից իրականության ընկալման ու կառուցման փոխկապակցված միջոցներ են: Լեզվական փաստերը ցույց են տալիս, որ մի շարք ժամանականիշ բառեր ծագել են տարածական նշանակություն և գործառույթ ունեցող լեզվական միավորներից՝ ցույց տալով, որ մարդու լեզվական գիտակցության մեջ տեղը, գործողության իրականացման վայրը կարող են հանդես գալ որպես տվյալ գործողության կամ իրադարձության ժամանակային բնութագրման հիմք: Տարածության և ժամանակի իմաստաբանական կապի վկայություն է հայերենին բնորոշ տեղ>ժամանակ անցումը, որը վաղուց արձանագրված է լեզվաբանական ուսումնասիրություններում որպես իմաստային զարգացման օրինաչափ ձև և, ըստ էության, վկայում է մարդկային ճանաչողության մեջ տարածական փորձի առաջնայնության մասին: Այսպես է առաջացել, օրինակ, **գահ/գաՀ** ժամանականիշը:

Տարածության և ժամանակի կապը լեզվում արտահայտվում է նաև այնպիսի բառամիավորների առկայությամբ, որոնք միաժամանակ կարող են գործածվել թե՛ տարածական, թե՛ ժամանակային նշանակություններով: Այս երևույթը դրսևորվում է երկու հիմնական եղանակով՝ բազմիմաստությամբ, երբ նոր իմաստը ձևավորվում է նույն բառի սահմաններում՝ նախնական նշանակության հիման վրա (լեզվում առավել տարածված է ժամանականիշ իմաստի զարգացումը տարածականից, ինչպես՝ **ղաթ, ղաթումը**, **տէն/տըէն**, **տէս/տըէս, մինչըէվ/մինչէվ/միչըէվ/միչէվ/մինչ** և մի շարք այլ

բառերի պարագայում), և համանունությամբ, երբ, չնայած ձևական նույնությանը, բառերը գործառում են որպես անկախ լեզվական միավորներ՝ տարբեր իմաստներով (օրինակ՝ բարբառային **առաչ** բառի դեպքում):

Տարածական ճանաչողությունը, լինելով զգայականորեն ընկալելի՝ տեսանելի, շոշափելի, չափելի և այլն, կարող է դառնալ հիմք անտեսանելի, անշոշափելի, անսկիզբ ու անվերջ ժամանակի վերացականությունը հաղթահարելու, այն արտահայտելի դարձնելու համար: Սա վկայում է մարդկային մտածողության մեջ տարածության ու ժամանակի փոխկապակցվածության, փոխներթափանցման մասին: Այսպես, ասում ենք երկար ժամանակ, բայց երկարությունը տարածության հատկություն է, ասում ենք ժամանակն անցնում է, մոտենում է, գնում է, բայց անցնելը, մոտենալը, գնալը շարժում են տարածության մեջ: Մոտ ապագա, հեռավոր անցյալ ձևերում մոտ-ը և հեռու-ն դարձյալ տարածական հասկացություններ են: Ժամանակը լեզվում հաճախ ներկայացվում է որպես սահմաններ՝ սկիզբ, վերջ, միջնամաս ունեցող, ինչը դարձյալ հատուկ է տարածական կազմակերպմանը և կառուցվածքավորմանը: Այսինքն՝ մեր ուղեղը, չունենալով ժամանակի անմիջական, ուղղակի ընկալում, օգտագործում է արդեն կառուցված տարածական սխեմաները որպես պատրաստի ճանաչողական միջոցներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ղարաբաղի բարբառի բառապաշարի մաս կազմող իմաստային-թեմատիկ երկու հիմնական խմբերի՝ տարածական հարաբերություններ և ժամանակ արտահայտող բառամիավորների քննությունը ի հայտ է բերում հետաքրքիր իրողություններ ու օրինաչափություններ, որոնք թույլ են տալիս կատարելու ընդհանրացումներ ու եզրահանգումներ ոչ միայն տվյալ իմաստային խմբերի, այլև բարբառի ընդհանուր առանձնահատկությունների վերաբերյալ:

1. Պատմական զարգացման ընթացքում բարբառը ձևավորել է տարածաժամանակային հարաբերությունների արտահայտման ինքնատիպ, հարուստ, բազմաշերտ և կառուցվածքային առումով բարդ համակարգ: Այդ համակարգը կայուն ու անփոփոխ չէ, ու թեև գործառական, բառակազմական, ծագումնաբանական քննությամբ բացահայտվում են ժողովրդական մտածողության մեջ տարածական ու ընկալումների ամրակայման հիմնական ձևերն ու միջոցները, այնուամենայնիվ դրանք ժամանակի ընթացքում փոփոխվում են, լեզվական նոր հարաբերություններ են վկայվում ժամանակի մեջ՝ ձևավորելով տարածաժամանակային հարաբերություններ արտահայտող նոր հասկացություններ ու միավորներ:

2. Տարածաժամանակային հարաբերություններ արտահայտող բառամիավորների համակարգը կազմված է ծագումով և կառուցվածքով բազմազան լեզվական միավորներից, որոնք ձևավորվել են ինչպես բնիկ հայերեն բառապաշարի հիմքի վրա, այնպես էլ տարբեր լեզուներից կատարված փոխառությունների միջոցով:

Բնիկ բառաշերտը, ըստ էության, ժողովրդի պատմության, մտածողության, մշակութային ինքնության ու ինքնատիպության վկայությունն է, իսկ բարբառը այդ վկայության ամենահավաստի ու ամենաանմիջական կրողն է: Բարբառային խոսքում

բնիկ բառերը շատ հաճախ պահում են իրենց նախնական իմաստներն ու նրբերանգները՝ ներկայացնելով լեզվի հնագույն վիճակի առանձնահատկությունները:

3. Թեև բնիկ շերտը՝ որպես հնդեվրոպական ժառանգություն, բառապաշարի կորիզն է և ապահովում է նրա շարունակականությունն ու կառուցվածքային կայունությունը, այնուամենայնիվ այն չի կարող բավարարել փոփոխվող լեզվական ու հաղորդակցական միջավայրի բոլոր պահանջները: Ղարաբաղի բարբառը, լեզվական ու պատմամշակութային շփումների մեջ գտնվելով հարևան ժողովուրդների հետ, անխուսափելիորեն իր բառապաշար է ներգրավել օտար տարրեր, և դա օրինաչափ է: Փոխառյալ միավորները գոյակցում են բնիկ ձևերի հետ՝ պայմանավորելով բարբառի կենսունակությունը, արտահայտչական հնարավորությունների ընդլայնումը: Այս օրինաչափությունը հստակ դրսևորվում է նաև քննվող իմաստային-թեմատիկ խմբերում, որտեղ բնիկ և փոխառյալ տարրերի փոխգործակցությունը ձևավորում է բազմաշերտ ու կենդանի համակարգ:

4. Փոխառյալ միավորների գերակշիռ մասը բարբառ է մուտք գործել արևելյան լեզուներից (անմիջական կամ միջնորդավորված), որը պայմանավորված է տարածաշրջանային երկարատև շփումներով, իսկ նոր փոխառությունների հիմնական աղբյուրը ռուսերենն է: Ակնհայտ է, որ օտար բառի գործածության պատճառը իմաստային և կիրառական նրբերանգ ունենալով է պայմանավորված:

5. Ժամանականիշ միավորների համակարգը ներառում է ինչպես բազմաթիվ հնդեվրոպական անվանումներ, այնպես էլ փոխառյալ տարրեր: Ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ *ժամանակի* ընդհանուր հնդեվրոպական անվանում հայերենը չի պահպանել. **ժամանակ** բառն ունի իրանական ծագում: Հասկացության բարբառային տարբերակների մեջ էլ փոխառյալ ձևերը թվական գերակշռություն ունեն բնիկ ձևերի համեմատությամբ: Օրվա պահերն անվանող բառամիավորների ու դրանց բարբառային տարբերակների գերակշիռ մասը ծագմամբ բնիկ է: **Օր** բառը բնիկ հնդեվրոպական է: Շաբաթվա օրանուններից **ուրբաթը** և **շաբաթը** սեմական ծագում ունեն, **կիրակին** հունարենից կատարված փոխառություն է, իսկ շաբաթվա մյուս օրանունները կազմվել են մեր լեզվի ներքին օրինաչափություններով: **Ամիս** և **տարի** բառերը, **տարվա չորս եղանակների անվանումները** բնիկ հնդեվրոպական են, **ամսանունները** վերցված են լատիներենից:

6. Հայերենում լայնորեն ներկայացված են տարածական հարաբերություններ արտահայտող բնիկ հնդեվրոպական անվանումները: Դրանց մեծ մասը հնչյունական-արտասանական զանազան փոփոխություններով պահպանված է Ղարաբաղի բարբառում և բնութագրվում է կիրառական կայունությամբ: Իմաստային այս խմբի առանցքային միավորի՝ **տեղ** արմատի հնդեվրոպական հնությունն արդեն իսկ վկայում ու հաստատում է, որ տվյալ դաշտը հայոց լեզվի պատմության խորքային շերտերից է:

Փոխառություններն ընդլայնում և լրացնում են իմաստային այս խմբի բառապաշարը՝ դարձնելով այն ավելի ճկուն նոր տարածական իրողությունների անվանման, իմաստային նրբերանգների արտահայտման համար: Այստեղ օտար ձևերը

մեծ մասամբ գործածվում են որպես հիմնական բնիկ հնդեվրոպական ծագում ունեցող միավորների բարբառային տարբերակներ՝ ձևավորելով հոմանիշային շարքեր:

7. Բառակազմական քննությամբ վերհանվում են իմաստային այս խմբերի միավորների կառուցվածքային առանձնահատկությունները (հանդիպում են թե՛ համադրական, թե՛ վերլուծական բարդություններ, բառակազմական միջոցներն են բառաբարդումը և ածանցումը): Հետաքրքրական են հատկապես բարբառային այնպիսի կազմությունները, երբ բառի ներքին ձևը բացահայտում է ժամանակային կամ տարածական իմաստի ձևավորման ժողովրդական-պատկերավոր հիմքը:

8. Տարածաժամանակային հարաբերություններ արտահայտող բառամիավորներին բնորոշ է հոմանիշային բազմազանությունը: Շատ հաճախ նույն հասկացության արժեքով բարբառի բառապաշարում գործառում է հոմանիշ եզրերի մի ամբողջ խումբ: Դա պայմանավորված է մի կողմից՝ հասկացության վերացականությունը հաղթահարելու ու կոնկրետության հասնելու, մյուս կողմից՝ իմաստային նրբերանգներն արտահայտելու հանգամանքով:

9. Հոմանիշային շարքերի հարստացման և տարածական ու ժամանակային հարաբերությունների ամենատարբեր նրբերանգների արտահայտության մեջ իրենց ուրույն տեղն ունեն նաև դարձվածային միավորները: Դրանք, պատկերավորման ու արտահայտչական լայն հնարավորություններ ունենալով, բարբառային խոսքը դարձնում են ավելի կենդանի, աշխույժ, դիպուկ ու արտահայտիչ:

10. Տարածաժամանակային հարաբերություններ արտահայտող բառամիավորները, բովանդակության դիտվածքում ընդհանրություններ ունենալով հայերենի գրավոր հուշարձաններում վկայված նույնանուն խմբերի միավորների հետ, արտահայտության դիտվածքում ենթարկվել են փոփոխությունների՝ ձևավորելով հնչյունական-արտասանական բազմազան տարբերակներ: Հնչյունական փոփոխությունները երբեմն կարող են այնքան խորքային լինել, որ բառը դառնա գրեթե անճանաչելի կամ զգալիորեն հեռանա գրական հայերենյան ձևից:

11. Տարածաժամանակային հարաբերությունների արտահայտության մեջ կարևոր տեղ են զբաղեցնում բնական երևույթների, բնակլիմայական պայմանների, աշխատանքային գործընթացների, կենցաղային փորձառության, պատմական իրադարձությունների հարաբերությամբ ձևավորված անվանումները, որոնք վկայում են ժողովրդի կենսակերպի և լեզվական մտածողության սերտ կապի մասին: Այս երևույթն առավել ակնառու է ժամանակի լեզվական արտահայտման ու ամրակայման մեջ:

12. Տարածությունը, լինելով անմիջականորեն ընկալելի, պատկերավոր արտահայտության անհրաժեշտություն ավելի քիչ ունի, սակայն դա չի նշանակում, որ տարածական հարաբերությունները զուրկ են պատկերավոր արտահայտչամիջոցներից: Դրանք բարբառում կարող են կապվել բնական միջավայրի լանդշաֆտային առանձնահատկությունների, մարդու կենսափորձի և դրա հիման վրա ձևավորված ընկալումների հետ:

13. Ղարաբաղի բարբառի տարածաժամանակային հարաբերություններ արտահայտող բառամիավորների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ լեզվական

համակարգում տարածական ու ժամանակային պատկերացումները կարող են ձևավորվել փոխկապակցված ու փոխլրացնող միջոցներով, ընդ որում՝ առաջնայինը տարածական կողմնորոշումն է. լինելով ավելի կոնկրետ ու զգայականորեն ընկալելի՝ այն հաճախ ծառայում է որպես հիմք ժամանակի արտահայտման համար: Ըստ այդմ՝ տարածական հարաբերություններ արտահայտող բառամիավորները իմաստային զարգացման արդյունքում ընդլայնում են իրենց կիրառությունը, ձեռք բերում նաև ժամանակային նշանակություն կամ արտահայտվում նույն լեզվական միջոցներով՝ վկայելով ժողովրդական լեզվամտածողության մեջ տարածության և ժամանակի ընկալումների փոխկապակցվածության մասին:

Ատենախոսության թեմայով հրատարակված գիտական հոդվածներ

1. **Ալթունյան Է.**, Ժամանակի ամրակայման ձևերի բառային իրացումը Ղարաբաղի բարբառում՝ ըստ առօրյա կենցաղակարգի, Մեսրոպ Մաշտոց համալսարան, Լրատու, 2021/2, էջ 169-174:
2. **Ալթունյան Է.**, Ժամանակի ամրակայման ձևերի բառային իրացումը Ղարաբաղի բարբառում՝ ըստ պատմական իրողությունների վկայման, Վանաձորի պետական համալսարան, Գիտական տեղեկագիր, 2022/1, էջ 8-16:
3. **Ալթունյան Է.**, Օրվա պահեր արտահայտող բառերը Ղարաբաղի բարբառում, Մեսրոպ Մաշտոց համալսարան, Լրատու, 2022/2, էջ 290-301:
4. **Ալթունյան Է.**, Ժամ և ժամանակ հասկացությունները Ղարաբաղի բարբառում, Արցախի պետական համալսարան, Գիտական տեղեկագիր, 2022/2, էջ 98-107:
5. **Ալթունյան Է.**, Ժամանակի ամրակայման ձևերի իրացումը Ղարաբաղի բարբառում՝ ըստ ազգային և կրոնական ծիսակարգի, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Ղարաբաղ-Շամախիի կամ ծայրհյուսիսարևելյան միջբարբառախումբ. արդի վիճակ, միտումներ և մարտահրավերներ, միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2022, էջ 3-14:
6. **Ալթունյան Է.**, «Տեղ» արմատի և տարածական կողմնորոշիչ միավորների իմաստագործառական քննություն Ղարաբաղի բարբառում, Գիտական Արցախ պարբերական, 2026/1, էջ 210-218:
7. **Ալթունյան Է.**, Տեղի սահման կամ տեղի կառուցվածքային մաս նշող բառային միավորները Ղարաբաղի բարբառում, Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի, Լեզվաբանություն և բանասիրություն, 2026/1, էջ 24-34:

АЛТУНЯН ЭДИТА РОБЕРТОВНА

ВЫРАЖЕНИЕ ПРОСТРАНСТВЕННО-ВРЕМЕННЫХ ОТНОШЕНИЙ В КАРАБАХСКОМ ДИАЛЕКТЕ

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.01 “Армянский язык”

Защита состоится 11 сентября 2026 г. в 15:00 на заседании специализированного совета КВОН РА 019 по Лингвистике, действующего при Институте языка имени Г. Ачаряна

Адрес: г. Ереван 0015, ул. Григора Лусаворича 15

РЕЗЮМЕ

Материалом данного исследования являются лексические единицы карабахского диалекта, выражающие временные и пространственные отношения, анализ которых позволяет выявить особенности лексического состава диалекта и народного языкового мышления.

Цель работы - всестороннее исследование лексических единиц, выражающих пространственно-временные отношения, с выявлением их этимологии, словообразовательных и семантических особенностей и функциональных проявлений, что имеет важное значение как с лингвистической, так и с историко-познавательной точки зрения. Изучение указанных единиц важно также потому, что способствует расширению представлений об исторических условиях.

Карабахский диалект предоставляет богатый материал для изучения средств выражения пространственно-временных отношений. В нём сохранились как древнейшие языковые пласты, так и новые единицы, сформировавшиеся на различных исторических этапах и объединяющиеся на основе семантической общности в отдельные лексико-семантические тематические группы. Их исследование позволяет выявить структурные особенности данной языковой системы и закономерности её развития, одновременно делая зримыми историю говорящего на этом языке народа и характер его взаимодействия с миром.

Диссертация состоит из введения, трёх глав с соответствующими подразделами, заключения, списка сокращений и списка использованной литературы. В приложение включен также словарь, охватывающий лексику исследуемых семантических групп.

Во введении обосновывается актуальность темы, определяются цель и задачи исследования, характеризуются материал и методология исследования, его теоретическая и практическая значимость, научная новизна, степень изученности материала и источниковедческая база.

В первой главе рассматриваются лексические единицы карабахского диалекта, выражающие пространственные отношения. Будучи живой ветвью армянского языка, диалект сохранил весь спектр языковых средств, посредством которых пространство становится компонентом речи.

В результате проведенной группировки предложена новая классификация лексики семантико-тематической группы, выражающей пространственные отношения. Рассмотрены семантическое поле и словообразовательная функция лексемы «**место**» (տեղ), показано, каким образом диалект концептуализирует статическое (неподвижное) пространство, различая углы, границы, края и боковые позиции. Проанализированы лексические единицы, выражающие движение и направление, с акцентом на динамический и процессуальный характер пространственных отношений, а также слова пространственной ориентации и местоименные (указательные и вопросительные) средства выражения пространственных отношений.

Во второй главе представлено выражение временных отношений в карабахском диалекте. Материал сгруппирован, классифицирован и проанализирован с точки зрения семантики и функциональной значимости. В зависимости от выражаемого временного значения выделены лексические единицы, обозначающие общее понятие времени и части суток, календарные единицы времени, а также лексические средства временной локализации. Их анализ раскрывает примечательные особенности народного миропознания и его языкового выражения.

Третья глава посвящена языковому выражению взаимосвязи пространства и времени. В познавательной деятельности человека пространственные и временные представления не могут существовать независимо и изолированно друг от друга. Любое действие, событие или состояние всегда происходит в определенной пространственной среде и в определенной временной плоскости. Это обусловливает неразрывную связь пространства и времени в мышлении и жизненном опыте человека.

Взаимосвязь пространства и времени отражается и закрепляется также в языке, поскольку язык призван не только называть элементы действительности, но и выражать отношения между ними в пространстве и времени. Именно пространство и время образуют рамки, внутри которых человек существует, действует, ориентируется, выстраивает свой опыт, передает его и, разумеется, вступает в коммуникацию. Иными словами, языковое выражение пространства и времени обусловлено познавательными потребностями человека и необходимостью их концептуализации и передачи.

В заключении обобщаются основные результаты проведённого исследования.

EDITA ROBERT ALTUNYAN

THE EXPRESSION OF SPATIOTEMPORAL RELATIONS IN THE KARABAKH DIALECT

Dissertation for the degree of Candidate of Philological **Sciences** in the specialty **10.02.01** "Armenian Language"

The defense of the dissertation will be held on September 11, 2026, at 15:00 at the session of Specialized Council on Linguistics 019 HESC of RA in the Institute of Language after H. Acharyan

Address: 15 Grigor Lusavorich St. 0015 Yerevan

SUMMARY

The material of the study consists of lexical units in the Karabakh dialect that express temporal and spatial relations, the analysis of which reveals distinctive features of the dialect's vocabulary and of the linguistic thought of its speakers.

The aim of the study is to provide a comprehensive analysis of lexical units expressing spatiotemporal relations by identifying their etymology, derivational and semantic properties, and functional realizations. Such an analysis is significant from both linguistic and historical-cognitive perspectives. The examination of these lexical units is also important because it contributes to a broader understanding of historical conditions.

The Karabakh dialect offers rich material for the study of the means by which spatiotemporal relations are expressed. It has preserved both ancient linguistic strata and newer units formed at different historical stages, on the basis of their semantic commonalities, these units are organized into distinct lexico-semantic thematic groups. Their study makes it possible to identify the structural features of the language and the patterns of its development, while also bringing into view the history of the community that speaks it and the ways in which that community relates to the world.

The dissertation comprises an introduction, three chapters with corresponding subsections, a conclusion, a list of abbreviations, and a bibliography. An appended dictionary encompasses the vocabulary of the semantic groups under examination.

The Introduction establishes the relevance of the topic, defines the aim and objectives of the research, and presents the material and methodology of the study, its theoretical and practical significance, its scholarly novelty, the state of research on the material, and the source base.

Chapter One examines lexical units in the Karabakh dialect that express spatial relations. As a living branch of the Armenian language, the dialect has preserved the full range of linguistic resources through which space becomes a component of speech.

On the basis of the grouping undertaken, a new classification is proposed for the vocabulary of the semantic-thematic group expressing spatial relations. The semantic field and derivational function of the lexeme "place" (տեղ) are examined, and the analysis shows how the dialect construes static (immobile) space by distinguishing corners, boundaries, extremities, and lateral positions. Lexical units denoting movement and direction are analyzed, with emphasis on the dynamic and processual character of spatial relations, together with words expressing spatial orientation and pronominal (demonstrative and interrogative) markers of spatial relations.

Chapter Two examines the expression of temporal relations in the Karabakh dialect. The material is grouped, classified, and analyzed in semantic terms and with regard to its functional value. On the basis of the temporal meanings expressed, the study distinguishes lexical units denoting the general concept of time and parts of the day, calendar units of time, and lexical expressions of temporal anchoring. Their analysis brings to light noteworthy features of the people's understanding of the world and of its linguistic expression.

Chapter Three is devoted to the linguistic expression of the interrelationship between space and time. In human cognition, spatial and temporal perceptions cannot exist independently or in isolation from one another. Every action, event, or state invariably occurs in a particular spatial environment and within a particular temporal plane. This accounts for the inseparable connection between space and time in human thought and lived experience.

The interrelationship between space and time is likewise reflected and entrenched in language, since language serves not only to name elements of reality but also to express the relations among them in space and time. Space and time form the framework within which human beings exist, act, orient themselves, construct their experience, transmit it, and, of course, communicate. In other words, the linguistic expression of space and time is shaped by human cognitive needs and by the necessity of conceptualizing and conveying them.

The Conclusion summarizes the principal findings of the study.